Չնակերպումների և վարկային ռեգիստրի բաժնի մասնագետ

Արմսվիսբանկ ՓԲ ընկերության Հաճախորդների սպասարկման դեպարտամենտի Չնակերպումների և վարկային ռեգիստրի բաժնին (Back office) անհրաժեշտ է համապատասխան աշխատանքային փորձով մասնագետ:

Պարտականություններ

- ապահովել հաստատված վարկերի տրամադրման, ներառյալ գրավի պայմանագրերի նոտարական վավերացումը և պետական գրանցումը,
- կազմել վարկային, գրավի, երաշխավորության և այլ պայմանագրերը, իրականացնել Բանկի հաշվեկշռում վարկերի տրամադրման, մարման, ինչպես նաև երաշխավորությունների և գրավների՝ արտահաշվեկշռում հաշվառման, փակման գործընթացների ապահովումը,
- հետևողական լինել վարկային և այլ պայմանագրերով հաճախորդների ստանձնած պարտականությունների կատարմանը,
- իրականացնել վարկային ապահովությունների տվյալների բազայի կազմում և վերահսկողություն,
- կազմել վարկային պորտֆելի վերաբերյալ հաշվետվություններ,
- իրականացնել ՀՀ ԿԲ վարկային ռեգիստրին, ԱՔՌՍ վարկային բյուրոյին անհրաժեշտ տվյալների տրամադրումը, թարմացումը, ճշգրտումը, ինչպես նաև վարկային ռեգիստրին և այլ վարկային բյուրոներին կատարվող հարցումների ուղարկումը և պատասխանները շահագրգիռ ստորաբաժանումներին տրամադրումը,
- իրականացնել ակտիվների և արտահաշվեկշռային միջոցների տարեկան, իսկ պահանջի դեպքում նաև այլ պարբերականությամբ, գույքագրումը,
- ծանոթանալ Բանկի՝ իր գործունեությանն առնչվող ներքին իրավական ակտերին, ինչպես նաև դրանց նախագծերին, դրանց վերաբերյալ ներկայացնել իր դիտողություններն ու առաջարկությունները,
- կատարել այլ անհրաժեշտ գործառույթներ:

Պրոֆեսիոնալ հմտություններ

- Բարձրագույն տնտեսագիտական/իրավաբանական կրթություն
- Աշխատանքային փորձ Բանկային/ֆինանսական ոլորտում պարտադիր է
- Նախաձեռնողականություն, ճկունություն և վճռականություն
- Պատասխանատվության բարձր աստիճան
- Հաղորդակցման և կազմակերպչական գերազանց հմտություններ
- Հաճախորդների հետ աշխատելու պատրաստակամություն
- Անգլերեն և ռուսերեն լեզուների իմացություն

- Microsoft Office ծրագրային փաթեթի գերազանց իմացություն
- ArmSoftBank ծրագրի իմացությունը ցանալի է

Դիմելու վերջնաժամկետը: 15.02.2019

Բոլոր հետաքրքրվող և համապատասխան փորձ ունեցող մասնագետներին խնդրում ենք ուղարկել իրենց ռեզյումեն hr@armswissbank.am էլ. Փոստին՝ վերնագրում նշելով “ **Ձևակերպումների և վարկային ռեգիստրի բաժնի մասնագետ** ”:

Կտեղեկացվեն միայն հարցազրույցի համար ընտրված թեկնածուները: